

ՀԱՅ ՅՈՒՆԵՏԵՍ ԲԱՆԱՍՏԵՂԺԸ

(Մահուան ներսնամեկի առիթով)

ԻՐԻՅ ՎԵՍԵԼՈՎՍԿՈՒ

1872 թ. լունուար ամսին Կ. Պոլսում թոքախտին զոհ
դնաց մի տաղանդաւոր պատանի, որ կարողացել էր ընթեր-
ցող հասարակութեան մէջ ոսկեյաւ լոյսեր լաւաշացնել, ան-
պալման բանաստեղծական տաղանդ արտաբախտել, գեղեցիկ և
զգալուն ոտանաւորների միջոցով ցոյց էր տուել իւր ազնիւ
մտքերն ու երջանկութեան մասին անհամարձակ ընտրքներ,
որ երազում էր մերձաւորներին օգուտ տալ, սակայն մեռաւ՝
անկարող լինելով կատարել իւր ցանկութեան հարկերորդ
մասն անգամ։ Շատ քիչ ապրեցաւ նա—դեռ 21 տարեկան չը
կար, որ օրասական վախճանը հասաւ։ Առաջին հալեացքից
կարող է թուալ, թէ այս անբաղդ պատանու գործունէութիւ-
նը, որ նոր էր կեանք մտել և դեռ չէր կարողացել իւր տա-
ղանդը դարդացնել և կատարելագործել, հաշիւ թէ արժանի է
առաւել կամ նուաղ մանրամասնութեամբ վերլուծութեան
ենթարկելու բանասիրական պատմութեան մէջ և զրական
քննադատութեան ենթարկել։ Բայց զարմանալի բան. վաղա-
հաս մահուան դատապարտուած բանաստեղծը, որ իրենից լե-
տով միայն մի քանի տասնեակ ոտանաւորներ է թողել, մին-
չև այսօր էլ չի մոռացուել։ Թէպէտ և նրանից լետով ուրիշ
շատ առաւել բաղմակողմանի և արդաստաւոր հեղինակներ
դուրս եկան, բայց և այնպէս սրան սիրում են և լիշում։ Նշա-
նակում է, որ նրա բանաստեղծութեան մէջ կալ մի ինքնու-
րոյն, անկեղծ, մարդուս սրտին խօսող բան...

Այդ անբաղդ բանաստեղծը—Պետրոս Դուրեանն է։

Դուրեանի կենսագրութիւնը, որ չարուստ չէ բազմակող-
մանի արկածներով, լիրաւ տխուր ազդեցութիւն է թողնում
և լիովին բացառում է մեղ ան ընդհանուր գոյնը (կոլորիտ),
որ տիրում է նրա ստեղծագործութեան մէջ, և զուտ անձնա-
կան գոյն ունի։ Նա ծնուել է 1851 թ. մարտի 20-ին Պոլսի
թաղերից միում, ուր գլխաւորապէս ապրում են չքաւոր,
աշխատաւոր մարդիկ, մի արհեստաւորի ընտանիքում, որը
միշտ ստիպուած էր մաքաւել զրկանքների և քաղցի դէմ։
Նրա մանուկը վեց տարեկան եղաւ, նրան մի հին խալիֆա-
ական դպրոց տուին, ուր տիրում էր ծեծն և ուր առանց

հասկանալու անգիր էին սովորեցնում Բարեբաղդաբար նրա ընկերներից մէկն էր ապագայ հանճարեղ երգիծաբան, Մոլիերի երկրպագու և հալոց կեանքի վատ կողմերը մերկացնող՝ Յակովբ Պարոնեանը։ Սկզբում Դուրեանը շատ էլ լաւ չէր ուսանում, սակայն հետզհետէ տարիների ընթացքում սկսեց աւելի լաւ սովորել, այնպէս որ վերջնական քննութեան ժամանակ բոլորի ուշադրութիւնն իր վրայ դարձրեց։ Նա շատ փոքր հասակից սկսել էր գոշանապէս ոտանաւորներ զրել և միևնույն ժամանակ սէր տածել դէպի եւրոպական նշանաւոր բանաստեղծների երկերը։ Մեզ լստնի է, որ այն ժամանակ իսկ նա արդէն թարգմանում էր Վ. Հիւգօի «Le roi s'amuse» պիեսը։ Եւ մինչև մահն էլ լափշտակում էր Վ. Հիւգօի և Լամարտինի ստեղծագործութիւններով։ Հետաքրքրականն այն է, որ նրա առաջին ինքնուրույն ոտանաւորը, որ զրել է ուսումնարանում, տխրեղ (էլէգիա) է։ Բալց այդ գրութեան մէջ արտալուրտած տխուր տրամադրութիւնը զեռ մանկական հասակում լիովին չէր համակել Դուրեանին։ Նա զեռ երազում էր ապագայի մասին, կեանքի բարիքների մասին, և ընկերական շրջաններում արտալուրտում էր կենդանութիւն, ոգեւորութիւն, դիւրագոգացութիւն... Մեզ հասել է նրա արտաքինի նկարագրութիւնը, որից տեսնում ենք, որ նա ունեցել է կանացի տիպար, խոշոր սև աչքեր, լալն ճակատ, բայակ շրթունքներ, դէմքի ախորժելի և բաց արտալուրտութիւն։ Սակայն կեանքը չապաղեց դնելու նրա պատանեկական դժագրութեան վրայ տանջանքի և հոգսերի կնիքը...

Երբ Դուրեանը դպրոցի դասընթացքն ավարտեց, իսկոյն փորձով իմացաւ ինչ ասել է գոլութեան լուսահատ, հիւժող կռիւը։ Նոյն իսկ Եւթմ էլ հալ ճիւղնակները չեն կարողանում ապրել միայն դրական աշխատանքով, որ շատ անգամ ոչինչ չի տալիս նրանց, և չ'ճախ ստիպուած են նեղութիւններ կրել կամ այնպիսի գործերի կաշել, որ ամենեւին իրենց բանը չէ։ հասկանալի է ուրեմն, որ անլաւ՝ համարեա մանուկ՝ սկսնակը կարող չէր, ի հարկէ, 60-ական թուականների վերջում իւր զրկով իւր ապրուստը հալթալթել... Դուրեանը, լափշտակուած իւր բանաստեղծութեամբ և ցնորքներով, պէտք է որոնէր մի որ և է պարապմունք, որից զէթ ամենաչնչին շահ ստանար։ Նա սկզբում դեղագործի աշկերտ դարձաւ, լետող վաճառականի մօտ գրագիր մտաւ։ Այս բոլորը, որ նրանից շատ ժամանակ էր խլում ու համեմատաբար քիչ վարձատրում, հիւժում էր առանց այն էլ խախուտ առողջութիւնն և ի հարկէ ոչ մի բարոյական գոհացում չէր տալիս... Երբեմն Դուրեանը հարկադրուած էր լինում առանց պարապմունքի մնալ, իւր հարազատների հետ միասին սարսափելի աղքատութիւն քաշել, քանի օյերով չլուծած սեղեակում մնալ, որովհետեւ հարկաւոր միջոցներից զրկուած էին լինում...

Մի խօսքով սա հալ բանաստեղծի մահացուցական է։

Դուրեանի դրութիւնն առ ժամանակ բաբուքունց, երբ նրա վրայ ուշադրութիւն դարձրեց բանաստեղծ, գրամատուրգ և թարգմանիչ Խորէն Նար-բէլ Կախկոպոսը, որը նրա համար մի մասնաւոր ընտանիքում ուսուցչի պաշտօն գտաւ, որով Դուրեանը մի քանի ամիս որոշ ապրուստի միջոց ունեցաւ։ Չնախելով բախտի բոլոր ձախորդութիւններին, Դուրեանը չէր դադարում գրական աշխատանքով զբաղուելուց և ոտանաւորներ ու պիեսներ գրելուց։ Քանի մօտենում էր մահը, այնքան էլ պատանի Դուրեանի տաղանդն աւելի ու աւելի հասունանում էր և ինքնուրոյն դառնում։ Մի անգամ նրան լաջողուեց տեղական հայ բեմը հանել իւր ողբերգութիւններից մէկը, որի համար նա ստացաւ 10—15 տաճկական ոսկի (մօտաւորապէս 100 մանէթ)...

Դրանից լետով շուտով ուսուցչի պաշտօնից զրկուելով՝ նա վճռեց իւր բաղդը բեմի վրայ փորձել։ Մեզ հասած տեղեկութիւններից երևում է, որ նա բաւական շնորհալի դերասան է եղել։ Ժանաւանդ լաջող կատարելիս է եղել «Ջէն-Գրէյ» պիեսում Էդուարդ VI դերը։ Սակայն լսատեղ էլ նրան չլաջողուեց, ոտճիկը շատ անկանոն էր ստանում, թափուրոնի կառավարչի հետ միշտ դժգոհութիւններ և ընդհարումներ էր ունենում։ Նա ստիպուած եղաւ ձգել բեմը և նորից գործ փնտրել։ Հէնց այս ժամանակ էլ, մշտական անհանգըստութիւններով և քաղցի ներգործութիւնից, սկսուեց նրա խոլը, զիւրաբեկ և ի բնէ խախտտ մարմինն ուժասպառ լինել։ 1871 թ. սկզբին նրա թոքախտն աւելի սուր կերպարանք ստացաւ և լաջորդ տարին մեռաւ։

Մանր, ուրախութիւնով և լոյսերով աղքատ կեանքն իւր կյնիքն է դրել Դուրեանի ամբողջ բանաստեղծական ստեղծագործութեան վրայ։ Նրա ոտանաւորների մէջ արտափալուծւած են տխուր, լուղիչ մտքեր, հիւանդոտ նախազգացումներ և վիշտ խորտակուած ցնորքների համար։ Անբաղդ պատանի Դուրեանի բանաստեղծութեան գլխաւոր արժանիքն են կաղմում—անկեղծութիւնն ու սրտառուչ լինելը։ Սա չեմ աւսիլ, թէ նրան կարելի է բառի բուն իմաստով, տիեզերական վշտի բանաստեղծ համարել...

Մեծաւ մասամբ նրա վիշտը գոյտ անձնական բնաւորութիւն ունի. ալդ վիշտը սերտ կերպով կապուած է այն տանջանքների հետ, որոնք իսկապէս վիճակուած էին նրան մանաւանդ նրա «Բոլոմելի» հիւանդութեան հետ։ Մի քանի գէպերում նրան թերեւ կարելի է համեմատել Նադսոնի հետ, թէ և վերջնիս անձնական քնարերգութեանը շատ լաճախ խառնում էին կեանքի շարժառիթները (մօտիւններ), բնդհանուր մարդկային վշտը արձագանքները։ Բայց որովհետեւ Դուրեանը նախ և առաջ իւր անձնական վշտի երգիչն էր, ուստի և գուցէ հիւնց ալդ պատճառով էլ միշտ ճշմարիտ էր զգրում, և իւր ոտանաւորների միջ առանց զարդարանքների միայն այն էր արտայայտում, ինչ որ, իսկապէս զգացել էր

և ինչով որ տանջուել էր: Նրա ստեղծագործութիւնն ամենալուս, ամենաթանգագին նիւթն է իւր կենսագրութեան համար: Նրա երգերը չարատանջ հառաչանք կամ լուսափայտ ձգտումն են դէպի լուս և ուրախութիւն մի մենակեաց, դժգոհուն հոգու, որ այս աշխարհիս վրայ երջանկութիւն չի տեսած...

✓ Անխուսափելի և անողորմ մահուան ակնկալութիւնը— ահա նրա բանաստեղծութեան գլխաւոր դրդիչներից մէկը: Լուսալու մասին ոչ մի ցնորքներով չէր խաբոււմ իրեն: Այնպիսի ոտանաւորների մէջ, որպիսիք են «Լճակ», «Ճրտունջ», «Հծծիւնք» և շատ ուրիշներ, նա մնաց բարեւ է ասում կեանքին, բնութեանը և ամեն բանի, որ մօտ է իւր սրտին (է, մնաք բարով, Աստուած և արեւ՝ որ կը պլպլաք իմ հոգու վերեւ) պատրաստուում է օրհասական վախճանին, իւր կեանքի մի քանի ընդհանուր հաշիւներն է տեսնում, և այդ՝ 19—20 տարեկան հասակում, երիտասարդութեան արշալույսին... Երբեմն լանկարծ նրան սկսում է թուալ, թէ մահը, այս հոգի և անողոք ուժը, կարող է իրեն բերկրութիւն, մխիթարանք, հանգիստ, երջանկութիւն, արիւթիւն, այսինքն տալ ակնբոլորը, ինչ որ նրան վիճակուած չէր ճաշակել:

ԻՆՑ ԿԸՍԵՆ

Ինծի կըսեն.— «Ինչու լուս ես:—

«Լի՛, միթէ բառ կամ խօսք ունի

Արշալույսը, որ կը բռնկի:

Ձի անհուն է ակն ալ ինձ պէս:»

Ինծի կըսեն.— «Միշտ տըխուր ես —

Ի՛նչպէս չըլլամ, մէկիկ մէկիկ

Թօթափեցան գլխուս աստղիկք...

«Արշալույս մը շանցմաւ սըրտէս:»

Ինծի կըսեն.— Կըրակոտ չես,

Լըճակի մը պէս ես մեռած,

Դալկահար՝ դէմքդ ու հայեցումս —

«Ո՛հ, լատակն են իմ փրփուրներս:

Ես ինձ կըսեմ.— Ժամդ է հասեր,

Քու երկրորդ սև մօրդ գլխի դող,

Գերեզման, հոն գտնես դու դող,

Վարդեր՝ թրթռում՝ թռիչ ու աստղեր...»

«Ի գերեզման ամենասիրելիւ վարդան Լութֆեանի՝ հեփեմնունք» Էլեգիայի մէջ ողբում է վաղամեռ՝ սրտակից ընկերոջ մահը, որի հետ անբաժան էին կեանքի բոլոր հանդամանքներում: Ինչպէս որ ռուս բանաստեղծ Նադսոնը «ոչ, մուսա, մի կանչի» լալտնի ոտանաւորի մէջ ցաւ է լալտնում, որ իւր հայրենիքի համար չի կարող անել ակն բոլորը, ինչ որ երազում էր անել և որ ստիպուած է իւր կեանքին հրաժեշտ տալ՝ չկարողանալով դործով ապացուցանել իւր աղդին,

Քէ էինչպէս սիրում էր նրան, արնպէս էլ Դուռեանը ժամանակ առ ժամանակ լիշում է իւր հայրենիքը, իւր եղբայրներին, որոնց նա մի ժամանակ ուզում էր ծառայել, որքան որ իւր ուժերը ներէին: Հայրենիքի լիշատակութիւնը—բարձրագոյ բառեր չէին լուկ և ոչ էլ դատարկ ձայն: Ճիշտ է երբէք Դուռեանը նպատակաւոր բանեղծեց, ազգային վշտի ու պաշարի երգիչ եղած չէր: Բայց դարձեալ ամենասառաջին ոտանաւորներին մէջ (‘Հայրն վիշտը’) «Այդդանի մասին» և մի քանի ուրիշ ոտանաւորների մէջ նա ժամանակ առ ժամանակ շօշափում է հայրենակիցների ծանր վիճակը: Եթէ նա աւելի երկար ապրէր, գուցէ աւել գիծը (մոտիւր) նրա ստեղծագործութեան մէջ նշանաւոր տեղ բռնէր... Յամենայն դէպս մեղ չի գարմացնում արն, որ բանաստեղծը կեանքին Վնաս բարոյի ասեղուց առաջ լիշել էր և իւր ազգը, որի համար նա շատ քիչ բան էր արել: • Այդ միտքը, ի միջի ալլոց, արտայայտուել է ամենաազաւ ոտանաւորներից մէկի «Իմ ցաւի» մէջ, որի վերջին տողերը՝ ողորմ նման են Նադսոնի դանդաղներին:

ኮ ሆ ጸ ሂ ኮ ሮ.

Ուրբ տենչերով լոկ ծարաւած՝
 Յամաքած գըտնել աղբերքն լամալը,
 Յամաքել ծաղիկ հասակի մէջ.

Ո՛հ, չէ արնհատի ցաւ ինձ իամար:
 շերմ իամբողրով մը դեռ չսկրած՝
 Սա ցուրտ ճակատս, դալկահար՝
 Հանգչեցունել հողէ բարձին.

Ո՛հ, չէ արնշափ ցաւ ինձ համար:
Դեռ չը գորկած էակ փունջ մը
Ժպտէ, գեղէ, հօրէ շաղկալ՝
Գրրկել սա ցուրտ հողակոյտը.

Ո՛հ, չէ՛ արնշափ ցաւ ինձ համար:
Քաղցր երազով մ'լռելի մրափ
Չանդորրած գլուխս մըրրկհաւար
Ննջիւ հողէ վերմակի տակ,
Ո՛հ, չէ՛ արնշափ ցաւ ինձ համար:

Հազնիլ հիւղին մուր—անունը,
Ծըծեւ նորա մըրուր—օղն լար,
Միշտ ցաւի, բայց միանգամայն,

Ո՛հ, չէ արնշափ ցաւ ինձ համար:
 Հէք մարդկութեան մէկ ոստը դոս՝
 Հախճախ Եւ անիմա Բոլորս:

Չօղնած անոր մեռնիլ աննշան:
Ո՛հ, այս է սոսկ թաւ ինձ համար:

Որոշ չափով հաշտուած լինելով մահուան հետ, երբեմն
քանապետեղծը մտածում է, թէ արդեօք մահուանից լետով իւր
անոնը մոռացու թեան չափով արուի իւր աղղալինների մէջ:

Գուրգէ նրան փոքր ինչ քաջալերէր և յիշխարէր ալն դիտակցութիւնը, թէ բարեկամները և իրեն համակրող ընթերցողներն իր մահուանից լիտով կըլիշեն իր կարճատև, բայց անկեղծ, բուռն սիրով լցուած գործունէութիւնը, թէ ալց կդան իր շիրմին, կկարդան իր ոտանաւորները: Նրան թուում է, թէ ալզ հաւատարիմ, անդաւաճան սէրը դէպի իր լիշատակը, կարող է իր մահը նուազ անմխիթար, նուազ անդառնալի դարձնել, ասես թէ իր նորարողը կեանքը լարատե կը դարձնէ: Եթէ բոլորն էլ մոռանան ու իր անունը ոչ ոքի համար արժէք չունենալ, ալն ժամանակ համայնակ կարելի է ասել, որ ինքը անուել է, մեռել է մարդկանց համար էլ, իր ազգի համար էլ:

Ի Մ Մ Ա Հ Ը.

Եթէ դժգոյն մահու հրեշտակ
Անհուն ժպտով մ'իջնէ իմ դ'մ,
Շողիանան ցաւքս ու հողիս,
Գիտցէք, որ դեռ կենդանի եմ:
Եթէ սրնարս իմ տ'պար
Մոմ մը վըտիտ ու մահադէմ,
Ո'հ, նըշուլ՝ ցուրտ ճառագայթ,
Գիտցէք, որ դեռ կենդանի եմ:

Եթէ ճակտովս արտօսարդօծ
Զիս պատանի մէջ ցուրտ զերթ վէմ
Փաթթեմ, դընեն սև դադաղը,
Գիտցէք, որ դեռ կենդանի եմ:
Եթէ հընչէ տրխուր կոչնակ,
Թրթռուն ծիծաղն մահու դժխեմ
Կադաղս առնէ իր համր քալլ
Գիտցէք, որ դեռ կենդանի եմ:

Եթէ մարդիկ ալն մահերգակ,
Որք սև ունին ու խոժոռ դէմ՝
Համասրփուն խունկ ու աղօթք,
Գիտցէք, որ դեռ կենդանի եմ:
Եթ' լարդարեն իմ հողակուտ,
Եւ հեծեծմամբ ու սըղալէն
Իմ սիրելիքը բռժանուին,
Գիտցէք, որ միշտ կենդանի եմ:

Իսկ աննըշան եթէ մնալ
Երկրի մէկ խորշն հողակուտն իմ,
Եւ լիշատակս ալ թառամի
Ա'հ, ալն ատեն ես կըմեռնիմ: (1871 թ.)

Բայց մահը Գուրեանի բանաստեղծութիւնների մէջ լիովին տիրապետող տեղ չի բռնում: Ժամանակ առ ժամանակ մահը տեղի է տալիս մի ուրիշ զօրեղ ոլտի—ալզ սէրն է, որը, ինչպէս ցոյց տուին ժամանակակից աւելի զգալուն, նրբամիտ

բանաստեղծները, րնդհանուր առմամբ շատ տեղերում նմանութիւն և չոչափման կէտեր ունի մահուան հետ... Սէրը զարդարում է բանաստեղծի անմխիթար կեանքը, գէթ ըոպէական մոռացութիւն է տալիս նրան։ Որքան մօտ է մահը, որքան սարսափելի է վերահաս խաւարը, այնքան էլ աւելի՝ հիացմամբ գովաբանելով կանացի գեղն ու հրապուրը՝ նա աշխատում է սիրով անուրջքների ետեից ընկնել։ Նրա տաղանդի մէջ, Ռոդենքախի խօսքերով ասած, «մահ և սէր բառերը չփուլում են իրար, ասես թէ նրանք միևնոջն լեռան երկու լանջեր լինին»։ Դուրեանը սիրած կնոջ երգում է իւր բուռն և նուրբակա՛ն ոտանաւորների մէջ, երբեմն-երբեմն կարծես նա առ ժամանակ մոռանում է իւր վերահաս վախճանը, բայց և շուտով դարձեալ սկսում է նկարագրել իւր զգալի վիճակը, որպէս մի մարդ, որ զրկուած է սիրով վալիքներից, որն իրաւունք չունի մտածելու իւր անձնական կեանքի վրայ, փոխադարձ սիրով վրայ լուս ունենալ և օղալին ամրոցներ շինել (նէ, հալուհին, մնաս բարեաւ, նալուածք մը, Շուշան և ուրիշ շատերը) թէ իսկապէս Դուրեանն ունի էր գովաբանում իւր ոգևորուած ոտանաւորներին մէջ, մեզ լալտնի չէ։ Ոմանց ասելով բանաստեղծն անլուս սիրահարուած է եղել բարձր դասակարգի մի գեղեցիկ օրիորդի, որն ոչինչ չի իմացել նրա զգացմունքի մասին։ Դուրեանի կենսագիր հայ գրագէտ Արշակ Չոպանեանը, որ այժմ ապրում է Պարիզում, ընդհակառակն այն կարծիքին է, որ այն էակը, որ գովաբանում փառաբանում էր Դուրեանը, իւր բանաստեղծակտն երևակայութեան ստեղծագործութիւն է, կանացի գեղեցկութեան, քընքշութեան և վալիչութեան իղէալն է, որ իսկական գոյութիւն չէ ունեցել կեանքի մէջ։ Ալդալիս կարծիք էր լալտնուել մի ժամանակ նաև Լէօպարդիի երգած գեղեցկուհիների մասին։ Ինտոյ լալտնուեց, որ այդ կարծիքն անհիմն է, որովհետև այժմ մեզ լալտնի են այն օրիորդների և դեռահաս կանանց իսկական անունները, որոնցով «Amore e morte»-ի հեղինակը գրաւուած էր։ Այսպէս թէ այնպէս մահուան դատապարտուած պատանու սիրալին ոտանաւորները լի են բուռն զգացմունքով և կրակով, նա իւր սիրունու մասին զգրում է որպէս մի բարձր, հիանալի, իղէալական էակի մասին։ Որպէս զի յստ արժանւոյն գովաբանէ նրա գեղեցկութիւնը, բանաստեղծը բնութեան մէջ է որոնում համեմատութեան համար առարկաներ, բայց ըլլոր համեմատութիւններն էլ թուլ, զոգոյն, չնչին են թւում նրան... Նա առանձնապէս սիրում է համեմատել գեղեցկուհուն աւելի բանաստեղծական, նազելի ծաղիկների հետ, ինչպէս են մանիշակը, վարդը, շուշանը, որոնք բանաստեղծի վառ երևակայութեան մէջ օրիորդի գեղեցկութեան առաջ ի հարկէ նսեմանում են։

Ձ Օ Ն Ի Կ Ք

Մինակ էր.

Վարդ մ'ըզզօն

Մատուցի

Ներա Զօն:

Երկնեցաւ

Նէ զրարթ՝

Կ'ընդունէր

Երբ իմ վարդ:

Ներա քով

Վարդն որչափ

էր անշուք

Գունաթափ,

Նորնպէս ձօնս

Համբարին՝

Ջոր տըւաւ,

Ձէր բնաւ գին: (1871 թ).

Դուրեանը փորձել է զրել նաև թատրոնի համար, որ նա զեռ երեսխալութիւնից սիրում էր: 1867 թուին, երբ տաւնեպեցերորդ տարին էր թեակոխում, արդէն զրել էր իւր առաջին «Վարդ և Շուշան» պիեսը. այս գրութեան ի հարկէ շատ անկատար է, զուտ պատանեկական գործ, լի մելադրամատիկական էֆֆեկտներով, և հաւանական մանրամասնութիւնների կողմից պակասաւոր ստեղծագործութիւն է: Համակուած ռոմանտիկական ոգով, մի լազգութիւն, որով Դուրեանը մինչև վերջին օրերն էլ լաիշտակուած էր: Չորս տարուց լետով նա կարողացել էր արդէն լոյս ընծայել իւր պիեսների մը փոքրիկ ժողովածուն, որոնց նիւթը հալոց պատմութեան առաւել փոթորկալից, ցնցող տարեշրջաններից էր վերցրել: Այդ պիեսներում զովաբանում է հերոսութիւնը, աշխուքիւնը, սէր առ հայրենիք, և ընդհակառակն դատաւիտւում է ուրացութիւնը, անտարբերութիւն զէպի ուրիշի տանջանքները, փառասիրութիւնը... Այս պիեսները, որպէս դրական արտագրութիւններ, թուէն, գրութեան սկսնակի ձեռքով, ազատ չեն էֆֆեկտներից և ճոռոմարան ատենախօսութիւններից և պէսպէս պայմանականութիւններից, որ Դուրեանը փոխ է առած Ֆրանսիացի ռոմանտիկ-դրամատուրգներից: Աւելորդ է ասել, որ այդ պիեսները՝ արժանաւորութեան կողմից կարելի չէ համեմատել նրա բանաստեղծական գրութեանների հետ: Բայց նրանց ընդհանուր ոգին, երիտասարդական աւելնը, իգէալականութիւնը, լաճախ նաև լալտնի զգալնութիւնը (սակտիմենտալ) — այս բոլորը մի աւելորդ անգամ ևս լոյս է սրվաւում Դուրեանի իղէալների և աշխարհայեցողութեան վրա: Բոլորովին ուրիշ բան է նրա «Թատրոն» կամ անբաղդները, որ նկարագրում է ժամանակակից կեանքը, դերասանների և ուրիշ բաղդաղուրիների կենցաղավարութիւնը, որը շատ մօտից լալտնի է տաղանդաւոր բանաստեղծին: Այստեղ ի միջի ալիոց արտափալլել է բանաստեղծի հալեացքը թատրոնի նշա-

նակութեան և կոչման մասին, նրա բեպերտուարի, հասարակութեան ճաշակի և այլ մասի:

Դուրեանի մահից լետոյ մնացել է նաև նրա շատ հետաքրքրական նամակներն՝ ուղղած ընկերներին և մօտիկ ծանօթներին (վերջին նամակը գրել է մահուանից մի քանի օր առաջ): Նրանցից մի քանիսը նշանաւոր են գեղարուեստական տեսակէտից — արձակ ոտանաւորների են նաև: Այդ նամակների ընդհանուր եղանակը — մանաւանդ 1872 թ. մօտ գրուածները, ի հարկէ տխուր և անմխիթար են: Բանաստեղծը զանդաւուր է իւր բաղդից, լիշատակում է իւր անլաջողութիւնները, հետզհետէ դարդացող հիւանդութիւնը, շփոթեմ, քիչ ատենէն պիտի մեռնիմ գրում է մի նամակում Վարդ ինկան գլխուս աստղերն. սև ամպերն ծանրացած են: Նա հասկանում էր, որ իւր քնարը իւր վերջին ամաս բարոյն էր ասում: Ըստ երևութիւն բարեկամները, որոնց հետ նա գրագրութիւն ունէր, աշխատում էին նրան մխիթարել, նրանից հեռու վանել մեղաւորութիւնը և կասկածամտութիւնը... Որքեմն նրա մէջ երջանկութեան, վալելիւ ցանկութեան սաստիկ ծարաւ է լալտնում...

Ոհ, տէք հոգւոյս կրակի մի կաթիլ,

«Սիրել կուգեմ դեռ 'և ապրիլ ու ապրիլ»... բացականչում է նա:

Նրան խիստ սարսափելի է թւում մեռնելը՝ դեռ սիրող փափաղը չառած և իւր լոգնած գլուխը չխոնարհած սիրած կնոջ ամարմարեայ կրծքին: «Ա՛հ, դեղեցիկ կեանք մ'ալ կայ, սէրն է ալդո: Նոյնն ասում է Դուրեանն և իւր քնարերգութեան մասին, որ լցրել է և զարդարել նրա կեանքը: «Աս որ աշխարհի վրայ միայն երգերը շատ սիրեցի» գրում է Դուրեանը, «կուգեմ որ իմ վերջին շունչս ալ երգ մ'ըլլայ: Ով որ երգ չունի կամ երգել չգիտեր՝ ղգալու ներդաշնակութեան, դեղեցկին և սիրունին իդէականը չոչափելու քաղցրութիւնը չունի: Մարդուն նշանաբանը երգն է, էն առաջին ձայնը երգն է, բնութիւնն ամբողջ երգ մ'է: «Սրիտասարդ ըլլալ և երգել, ծեր ըլլալ և աղօթել»:

Դուրեանի նոյն նամակների մէջ գտնում ենք լակոնական, բայց չափազանց ճշմարիտ գնահատութիւն դժբաղդ բանաստեղծի տխուր վիճակի մասին, որ բանաստեղծն ինքն էր արել: Կարծում եմ հէնց ամենից լարմարն էլ ալն կլինի, որ նրա գործունէութեան սոյն համառօտ տեսութիւնն էլ նրա խօսքերով վերջացնենք: — Բանաստեղծն իրեն անուանում է «ահա թշուառ երիտասարդ մը, որ աշխարհ եկաւ, և միայն իր մեռնելն ղգաց ու մեռաւ»:

Թարգմ. ԳՐ. ԲՆԴԵԼԵԱՆՑ